Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ
Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ի Ց

11 փետրվարի 2016 թվականի N 5

---

17. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի ՆԻՍՏԻ N 3 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 36-ՐԴ ԿԵՏՈՎ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՑԱԾ ԱՐՁԱՆԱԳՐԱՅԻՆ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 30-ի նիստի N 3 արձանագրության 36-րդ կետով հավանության արժանացած «Ինստիտուցիոնալ վարչարարության միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» արձանագրային որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 7-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

2) 28-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

28.	Երևանում գործող թատերահամերգային կազմակերպություններում իրացվող տոմսերի հաշվառման պիլոտային համակարգի ներդրում	Ոլորտում ձևավորվող հարկման բազայի հայտարարագրում	ՀՀ մշակույթի նախարարություն	2016 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ
	Իրացվող տոմսերի հաշվառման էլեկտրոնային համակարգի ինտեգրում ՀՀ ՖՆ տեղեկատվական բազային		ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ մշակույթի նախարարություն	2016 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2016 թ. փետրվարի 15
Երևան